

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց

**Թեմա՝** Հայ աշխարհագրական մտքի զարգացման պատմությունը

**Կատարող՝** Հերմինե Վարդանյան

**Աշխարհագրության առարկայի վերապատրաստման պատասխանատու՝**

աշխ. գիտ. թեկն. դոցենտ, Գ. Ավետիսյան

ԳՅՈՒՄԴԻ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
<b>Գլուխ 1.</b> Աշխարհագրության հետազոտման համառոտ ակնարկ-----	5
1.1 Աշխարհագրական ուսումնասիրությունները միջին դարերում -----	7
<b>Գլուխ 2.</b> Աշխարհագրական մտքի զարգացումը 19-20-րդ դարերում -----	14
2.1. Աշխարհագրական մտքի զարգացումը 19-րդ դարում-----	14
2.2. Աշխարհագրական մտքի զարգացումը 20-րդ դարում-----	16
Եզրակացություն-----	21
Գրականության ցանկ-----	22

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրությունը՝ գեոգրաֆիան, հնագույն գիտություններից մեկն է: Այն որպես ինքնուրույն գիտություն, ունի ավելի քան 2000 տարվա պատմություն: Սկզբնական շրջանում կուտակված գիտելիքները չհամակարգված էին, որի պատճառով գիտությունը դանդաղ էր զարգանում: Առաջինը նման գիտական համակարգմամբ սկսեց զբաղվել Թալես Միլեթացու կամ Հոնիական դպրոցը. նրանք աշխարհագրությունն առանձնացրեցին որպես Երկրի մասին գիտություն: Ըստ Արիստոտելի, հենց Միլեթացուն պետք է համարել աշխարհագրության հայր, քանի որ նա է համակարգել և գիտական տեսքի բերել եգիպտական, փյունիկյան և բաբելոնական աշխարհագրական հետազոտությունները:

Աշխարհագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում գիտությունների ամբողջական համակարգում, քանի որ նրա հետազոտության օբյեկտները շատ բազմազան են. աշխարհագրական թաղանթ, նրա ոլորտները, դրանցում ընթացող երևույթներն ու

գործընթացները, մայրցամաքները, օվկիանոսները, տարածաշրջանները, երկրները, հասարակական երևույթներն ու գործընթացները: Հայտնի է, որ աշխարհագրական թաղանթի առանձին ոլորտների ուսումնասիրություններով զբաղվում են նաև այլ գիտություններ՝ կենսաբանություն(կենսոլորտ), երկրաբանություն(քարոլորտ), տնտեսագիտություն(մարդոլորտ), ֆիզիկա(մթնոլորտ,քարոլորտ) և այլն: Սակայն միայն աշխարհագրության ուսումնասիրություններն են, որ ընդգրկում են աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտները: Աշխարհագրության ուսումնասիրության առարկաներն են Երկրի մակերևույթի բնական ու հասարակական բաղադրիչները և դրանց փոխազդեցության հետևանքով առաջացած տարածական համակարգերը՝ աշխարհահամակարգերը (գեոհամակարգեր): Աշխարհահամակարգերն ընդգրկում են տարբեր մեծության տարածքներ՝ առանձին բնակավայրերից մինչև ամբողջ պետություններ, լանդշաֆտի փոքր տեղամասից մինչև Երկրի աշխարհագրական թաղանթ: Դրանք կարող են լինել բնական, հասարակական և բնահասարակական: Անկախ տեսակից, բոլոր աշխարհահամակարգերը գտնվում են փոխազդեցության մեջ,

օրինակ՝ բնությունը և տնտեսությունը, կլիման և անտառը, օվկիանոսը և մայրցամաքը, օվկիանոսը և տնտեսությունը, և այլն:

Աշխարհագրության ուսումնասիրության նպատակն է բացահայտել ու վերլուծել բնական և հասարակական երևույթների տարածական օրինաչափություններն ու տարբերությունները, տարբեր աշխարհահամակարգերի և դրանց առանձին բաղադրիչների միջև եղած փոխադարձ կապերը:

Աշխարհագրության խնդիրն է տարածության և ժամանակի մեջ ուսումնասիրել՝

- բնությունը, նրա առանձին բաղադրիչները և դրանց փոխազդեցության ու կապերի հետևանքով ձևավորված բնական աշխարհահամակարգերը (բնական զոնա, բնական լանդշաֆտ, օվկիանոս, մթնոլորտ, անտառ և այլն)
- հասարակությունը, նրա առանձին բաղադրիչները և դրանց փոխազդեցության ու կապերի հետևանքով ձևավորված հասարակական աշխարհահամակարգերը (տնտեսական շրջան, տարաբնակեցման համակարգ, պետություններ, քաղաքներ և այլն)
- բնության, հասարակության և դրանց առանձին բաղադրիչների փոխազդեցության ու կապերի հետևանքով ձևավորված բնահասարակական աշխարհահամակարգերը (մարդածին լանդշաֆտ, ջրամբար, ջրանցք, հատուկ պահպանվող տարածքներ և այլն):

Այսիպիսով, բնական միջավայրի խելամիտ օգտագործման և վերափոխման ուղիների բացահայտումն էլ դարձել է աշխարհագրության գլխավոր խնդիրը: Աշխարհագրական բոլոր գիտությունների միասնական նպատակից ելնելով, կարելի է աշխարհագրությունը բնութագրել որպես աշխարհայացքային և մարդակենտրոն գիտություն, որն ունի իր հանրակրթական, դաստիարակչական և ճանաչողական նշանակությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հայ աշխարհագրական մտքի զարգացումը տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես նաև բացահայտել հայ աշխարհագետների ներդրումը դպրոցական և բուհական աշխարհագրության դասագրքերի կազմման գործընթացում:

# ԳԼՈՒԽ 1

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Աշխարհագրական հետազոտման համառոտ ակնարկ: Հայկական լեռնաշխարհի տարածքում աշխարհագրական ուսումնասիրություններ կատարվել են անհիշելի ժամանակներից: Այդ են վկայում ասորական, բաբելոնյան և ուրարտական սեպագիր արձանագրությունները: Չթերագնահատելով քարակերտ հուշարձանների նշանակությունը՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ առաջին ճանրակշիռ ուսումնասիրությունը կատարել է հույն պատմիչ, աշխարհագրագետ և ճանապարհորդ Հերոդոտոսը (Ք.ա. V դ.):

Նրա ուսումնասիրություններից ստացած անմիջական տպավորությունների ազդեցության տակ՝ հետագայում Հայկական լեռնաշխարհ այցելեցին հույն նշանավոր գիտնականներ Քսենոփոնը, Ստրաբոնը և Պտղոմեոսը (Ք.ա. IV – Ք.հ. I դարեր): Աշխարհագրական տեղեկություններ հավաքած առաջին հայ հեղինակն էր Մովսես Խորենացին (V դ.), ով իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ ոչ միայն մշակել է լեռնալանջերի յուրացման ավանդույթների, Արաքս գետի հորդացումների, Արարատյան դաշտի ոռոգիչ համակարգերի մասին Քսենոփոնի ճանապարհորդական հուշերը (այդ հուշերն ամփոփվել են Քսենոփոնի «Անաբասիս» գրքում), այլև՝ նկարագրել որոշ լեռնաշղթաների ու լեռնագագաթների մոտավոր բարձրությունները, հայերի ավանդական զբաղմունքները, հայոց թագավորների արքունական ունեցվածքը և այլն:

Հայկական լեռնաշխարհի բնության մասին արժեքավոր տեղեկություններ է գրել Անանիա Շիրակացին(VIIդ.): Նրա հեղինակած «Աշխարհացույց» և «Մղոնաչափք» գրքերում հանդիպում են Հայաստանի կլիմայական, հողաաշխարհագրական, վարչատարածքային շրջանացման սխեմատիկ առաջարկներ, լեռնագրական, ջրաբանական, կենսաաշխարհագրական մանրամասնություններ:

Հայկական լեռնաշխարհի բնության գիտական ուսումնասիրությունների մի նոր շրջան է սկսվում, երբ Արևելյան Հայաստանը ներառվում է Ռուսական կայսրության կազմի մեջ (1828թ.): Մինչև XX դարի սկիզբը Հայաստանի վերաբերյալ արժեքավոր

աշխատություններ են գրել ռուս ճանապարհորդ-ազգագրագետ Ի.Շոպենը, կլիմայագետներ Ա.Վոյեյկովը և Հ.Վիլդը, երկրաբան-քարտեզագիր Հ.Աբիխը:

XX դարի առաջին երկու տասնամյակները նշանավորվեցին Սևանի ավազանում և Լոռիում Վ.Դոկուչանի հողագիտական ուսումնասիրություններով, Ն.Կուզնեցովի բուսաբանական, Հ.Լինչի ազգագրական, Ի.Ֆիգուրովսկու կլիմայական, Ֆ.Օսվալդի երկրաբանական հետազոտություններով:

Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական ուսումնասիրությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավել Ղևոնդ Ալիշանի «Շիրակ», «Միսուան», «Այրարատ» և «Միսական» աշխատությունները, որոնք չեն կորցրել իրենց արդիականությունը նույնիսկ մեր օրերում: Աշխարհագրական հետազոտությունների համակարգման և համալիր զարգացման ամենաբուռն շրջանը կապվում է խորհրդային ժամանակաշրջանի հետ:

1929թ. Երևանի պետական համալսարանում հիմնադրվում է ընդհանուր աշխարհագրության ամբիոնը: 1933-1934 թթ. ուսումնական տարում կազմավորվում ԵՊՀ աշխարհագրաերկրաբանական ֆակուլտետը:

1935թ. ձևավորվում է Հայկական աշխարհագրական ընկերությունը: 1958-1998 թթ. ՀԽՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի կազմում գործել է աշխարհագրության բաժինը: Ներկայումս համալիր աշխարհագրական ուսումնասիրություններ գրեթե չեն կատարվում:

Հայաստանում աշխարհագրությունը զարգացել է անհիշելի ժամանակներից: Այդ են վկայում բաբելոնյան, ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունները:

Աշխարհագրության մասին կարևոր նյութ է պարունակում Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», որտեղ տրված են տեղեկություններ այն ժամանակ հայտնի աշխարհի, հատկապես Հայաստանի և հարևան երկրների աշխարհագրական տեղադիրքի, բնության և բնակավայրերի մասին: Հինգերորդ դարում նույն Մովսես Խորենացին Հայաստանում ստեղծվեց վաղ միջնադարի աշխարհագրության եզակի գործերից մեկը՝ «Աշխարհացոյցը»: արունակելով Խորենացու գործը՝ աշխարհագրական առաջադեմ գաղափարներ շարադրեց Անանիա Շիրակացին, որն իր աշխատություններում տվել

էԵրկրիզնդաձևությանգաղափարը, մակընթացություններն ու տեղատվություններն համարել Լուսնի ձգողության ուժի հետևանք:

XVII-XVIII դարերում կատարելագործվեցին հետազոտության մեթոդները, ստեղծվեցին նոր գործիքներ: XVIII-XIX դարերում Վենետիկի՝ Սուրբ Ղազար կղզի, Միսիթարյան միաբանությունում ստեղծվեցին մենագրություններ՝ Աշխարհագրության և պատմական Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ, կազմվեց հայաստաո գլոբուս և այլն: XIX-XX դարերում աշխարհագրական միտքը զարգացավ նաև Հարավային Կովկասում:

1843-1844 թվականներին Խաչատուր Աբովյանի նախաձեռնությամբ Երևանում ստեղծվեց առաջին օդերևույթական դպրոց կայանը, որի տվյալների հիման վրա 1846 թվականին գրեց «Երևանի օդի ջերմաստիճանը» հոդվածը: Նա մի շարք հոդվածներում տեղեկություններ տվեց Հայաստանի գավառների աշխարհագրության մասին: Հայաստանի աշխարհագրական հետազոտություններում էժ ներդրում են ունեցել նաև օտարազգի աշխարհագետները: Նրանցից է Ա. Ղուկասովը, ում «Հայկական լեռնաշխարհի կառուցվածքի հիմնական գծերը» (ռուսական, 1901) աշխատությունը կարևոր տեղեկություններ էր պարունակում լեռնաշխարհի կառուցվածքային առանձնահատկությունների մասին:

### **1.1 Աշխարհագրական ուսումնասիրությունները միջին դարերում**

Գրերի գյուտից հետո 5-7-րդ դարերում հայոց լեզվով գրչությունը մեծ թափ է առնում: Դրա հետ մեկտեղ սկեցին զարգանալ նաև աշխարհագրական ուսումնասիրությունները միջին դարերում: Դավիթ Անհաղթի փիլիսոփայական նեոպլատոնական հայացքները մեծ դեր խաղացին աշխարհի ճանաչման և աշխարհագրության զարգացման գործում:

Անանիա Շիրակացին առաջինն էր որ հայոց լեզվով դասագրքերի ժողովածու ստեղծեց, որտեղ զետեղեց նաև «Աշխարհացոյցը», որը միջնադարյան հայ աշխարհագրության գլուխգործոցներից է: Նրա պատմական մասը ենթադրվում է, որ Խորենացունն է, իսկ աշխարհագրական մասը արված է ըստ Շիրակացու: Շիրակացու ժամանակներից է Ալեքսանդր Երկրաչափը, որից օգտվել է Շիրակացին և

նրա «Մղոնաչափը» կցել է «Աշխարհացոյցին» որպես հավելված: Միջնադարում կազմվել են նաև ուրիշ «Աշխարհացոյցներ» որոնցից մեկը կազմել է ՍտեփանոսՍյունեցին:

Մեզ են հասել նաև տեղեկություններ 13-րդ դարի «Աշխարհացոյցի» մասին, որի հեղինակը Վարդան Արևելցին է, սակայն այդ աշխատության քարտեզագրական մասը հայտնաբերված չէ, կան միայն հիշատակություններ:

Պետք է նշել, որ Հայաստանի միջնադարյան համալսարաններում և դպրոցներում դասավանդվել է աշխարհագրություն և օգտագործվել զանազան սխեմաներ ու ցուցադրական նյութեր: Դասավանդվել են մայրցամաքների ինչպես նաև Հայաստանի աշխարհագրություն:

Միջնադարյան աշխարհագրության զարգացման ասպարեզում եղել են ականավոր գործիչներ ու ճանապարհորդներ՝ **Ներսես Լամբրոնեցին, Մարտիրոս Երզնկացին, Կարապետ Բաղիշեցին, Գրիգոր Կեսարացին, աշխարհագրական բառարանի հեղինակ՝ Հովհաննես Անկյունեցին, Հակոբ Կարնեցին, Ավետիք Տիգրանակերտցին:**

Տպագրության հայտնագործումից հետո որոշ ժամանակ անց լույս են տեսնում Անանիա Շիրակացու, Ալ. Երկրաչափի, Վարդան Արևելցու աշխատությունները, որոնք էլ ավելի զարգացրեցին աշխարհագրական ուսումնասիրությունները միջին դարերում:

### **Անանիա Շիրակացի**

Մեծ է Անանիա Շիրակացու գիտական գործունեության ոլորտը: Զբաղվել է փիլիսոփայությամբ, աստղագիտությամբ, աշխարհագրությամբ, մաթեմատիկայով, տոմարագիտությամբ, ալքիմիկոսությամբ:



- Հոտը չի կարող առանց հովվի լինել:


- Այեկոծված կավը շտապում է կավահանգիստ, իսկ ժուժկալ մարդը անապատ է փնտրում:

- Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության:

- Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է:

- Կրթությունը ամեն ինչ է:

- Անգրագիտությունը մեծ չարիք է:



Նա երկրակենտրոն համակարգի կողմնակից էր և ըստ այդմ էլ բացատրում էր տարվա եղանակների, գիշերվա ու ցերեկվա առաջացումը: Որոշ համեմատությունների ու դատողությունների միջոցով եզրակացնում էր, որ Արեգակը մեծ է թե՛ Լուսնից, թե՛ Երկրից և գտնվում է շատ մեծ հեռավորության վրա: Իր աշխատություններում Անանիա Շիրակացին նշել է աստղագիտության մի շարք գործնական կիրառություններ: Տվել է Հայաստանի միջին լայնության համար ստվերաչափ կազմելու կանոնը: Կազմել է լուսնային խավարումների 19-ամյա պարբերաշրջանի աղյուսակները: Մեծ արժեք են ներկայացնում Անանիա Շիրակացու աշխատություններում հանդիպող աստղագիտական հայկական տերմինների մեկնությունները:

Մաթեմատիկական բովանդակություն ունեցող աշխատություններից ամենաարժեքավորը թվաբանության դասագիրքն է՝ գումարման, հանման, բազմապատկման և բաժանման գործողություններն ամփոփող աղյուսակներով: Գրքում զետեղված են նաև թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաներ հիշեցնող աղյուսակներ, մի շարք խնդիրներ: Անանիա Շիրակացու մեզ հասած

աշխատություններից գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև թանկարժեք քարերին, չափ ու կշիռներին, ֆիզիկայի և օդերևութաբանության զանազան հարցերին վերաբերող ուսումնասիրությունները:

Ազդվելով ժամանակի առաջավոր սոցիալ-քաղաքական ու մշակութային շարժումներից և անմիջականորեն ուսումնասիրելով բնությունը՝ նա կարողացել է տեսնել միջնադարյան բնագիտական տեսությունների կրոնական ուղղվածությունը և փորձել է դրանք փոխարինել գիտական տեսակետներով:

Անանիա Շիրակացու գիտա-մանկավարժական գործունեության և աշխարհայացքի վերլուծությունը վկայում է ինչպես նրա հայացքների բացառիկ խորության ու ինքնուրույնության, այնպես էլ միջնադարյան հայ առաջավոր բնագիտական, փիլիսոփայական ու մանկավարժական մտքի զարգացման գործում մատուցած մեծ ծառայությունների մասին: Անանիա Շիրակացին փաստորեն բնական գիտությունների հիմնադիրն է Հայաստանում

Պահպանվել են նաև Շիրակացու «Տիեզերագիտությունը», «Կենդանակերպի համաստեղությունների մասին», «Ամպերի և մթնոլորտային նշանների մասին», «Արեգակի ընթացքի (շարժման) մասին», «Երկնքի շրջագայությունների (օդերևութաբանական երևույթների) մասին», «Ծիր Կաթինի մասին» և այլ աշխատություններ: Շիրակացին իր աշխատություններում բերում է եգիպտացիների, հրեաների, ասորիների, հույների, հռոմեացիների և հաբեշների մոտ ընդունված թվագրության սկզբունքները, խոսում է մոլորակների շարժման, Արևի և Լուսնի խավարումների և նրանց պարբերականության մասին և այլն: Ընդունելով երկրի գնդաձևությունը՝ Շիրակացին կարծում է, որ արևը կարող է լուսավորել երկրի երկու կողմերը օրվա տարբեր ժամերին և երբ երկրի մի կողմում ցերեկ է, մյուսում՝ գիշեր: Նա Ծիր Կաթինը համարում է «խիտ և աղոտ աստղերի կուտակում»: Պաշտպանում է այն գիտնականների կարծիքը, որոնք համարում են, որ Լուսինը սեփական լույս չունի և լույս ստանում է Արևի միջոցով: Արևի խավարումը բացատրում է Լուսնի՝ Արևի և Երկրի միջև գտնվելով: Շիրակացին ուշագրավ բացատրություններ է տալիս անձրևի, ձյան, կարկուտի, ամպրոպի, հողմերի, երկրաշարժի և բնության զանազան այլ երևույթների մասին: Շիրակացու գրչին են պատկանում նաև մի շարք աշխարհագրական, պատմական աշխատություններ Մատենադարան:

Անանիա Շիրակացու թողած գիտական հարուստ ժառանգության մեջ կան այնպիսի հանճարեղ ստեղծագործություններ, որոնք գիտությունների պատմության մեջ ունեն առաջնակարգ տեղ:

Շիրակացու այդ աշխատությունների մասին գրվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով մասնագիտական մի շարք ուսումնասիրություններ, հրատարակվել են նաև Շիրակացու աշխատությունների կարևոր բնագրերը: Ուսումնասիրողների կատարած աշխատանքն ունեցավ այն նշանակությունը, որ Շիրակացին դարձավ գիտական լայն հասարակությանը հայտնի դեմքերից մեկը և նրա անունը մտավ մասնագիտական ուսումնասիրությունների մեջ:

**Աշխարհացույց** («Աշխարհացոյց» (նշանակում է «Աշխարհի ատլաս» (քարտեզների ժողովածու)), հայ միջնադարյան աշխարհագրական երկասիրություն: Կից ունեցել է շուրջ 15 քարտեզ: Մեզ են հասել «Աշխարհացույցի» քարտեզները նկարագրող ընդարձակ և համառոտ բնութագրեր: Կազմվել է V դարում (Մովսես Խորենացի) և շարունակվել, թարմացվել VII դարում (Անանիա Շիրակացի):

Աշխարհացույցում համառոտ թվարկվում է երկի գրման ժամանակ հայտնի երեք մայրցամաքների (Եվրոպա, Ասիա, Լիբիա) երկրները, երբեմն հաղորդվում է հակիրճ տեղեկություններ տվյալ միավորում հանդիպող բուսականության և կենդանական աշխարհի վերաբերյալ: Հանդիսանում է եզակի աղբյուր Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար, ինչպես նաև արժեքավոր տեղեկություններ է պարունակում այլ երկրների վաղ միջնադարի պատմության և աշխարհագրության վերաբերյալ:

«Աշխարհացույց»-ը դասավանդվել է միջնադարյան Հայաստանի դպրոցներում՝ Մովսես Խորենացու (V դար) «Հայոց պատմություն» և Անանիա Շիրակացու (VII դար) մաթեմատիկական ու տիեզերագիտական աշխատությունների հետ. սովորաբար կցվել է դրանց: Մեզ հասած «Աշխարհացույց»-ի ձեռագրերում որպես կանոն հեղինակ է հիշվում Պատմահայր Մովսես Խորենացին, սակայն չկա ոչ մի ձեռագիր, որը հաստատեր Անանիա Շիրակացու հեղինակ լինելը: Ժամանակակից հայ և օտարերկրյա ուսումնասիրողների մի մասը երկի հեղինակությունը վերագրում են Մովսես Խորենացուն մի մասը Անանիա Շիրակացուն, իսկ մյուսները այն համարում են անանուն հեղինակի գործ<sup>[6]</sup>:

Իրականում «Աշխարհացոյց»-ի հեղինակը Խորենացին է:

«Աշխարհացոյցն» իր կառուցվածքով նման է հույն աշխարհագիր Կլավդիոս Պտղոմեոսի (90–168 թթ.) «Աշխարհագրությանը»: «Աշխարհացոյցի» ներածականում («Հասարակախոսություն») երկրակենտրոն տեսության դիրքերից շարադրված է տիեզերագիտությունը, Երկիրը ներկայացված է գնդաձև, նշված են նաև գլոբուսը և քարտեզագրման տարրերը:

Երկրի միջօրեականը տրվում է ըստ հույն աշխարհագիր Երատոսթենեսի (մ.թ.ա. 276–194 թթ.): «Աշխարհացոյցի» հեղինակը մաթեմատիկական հաշվարկներով կառուցած աստիճանացանցում պատկերել է այն ժամանակ հայտնի աշխարհը:

Երկի բուն մասը՝ «Երկրաչափը», կազմված է 2 բաժնից: Առաջինում («Աշխարհագիր» կամ «Աշխարհագրություն») աշխարհի քարտեզագրական նկարագրությունն է, որի հիման վրա կազմվել է աշխարհի քարտեզը՝ «Աշխարհացոյց քարտեզ տիեզերացը»: Հասարակածի նկարագրությանը հետևում է ջրագրությունը՝ Ատլանտյան, Հնդկական օվկիանոսների, Հունական (Միջերկրական ու Սև ծովեր) և Կասպից ծովերի նկարագրությունը՝ դրանց մեջ թափվող գետերով: Մայրցամաքը բաժանվում է 3 մասի՝ «Եվրոպա», «Լիբիա» (Աֆրիկա) և «Ասիա»: Երկրորդ բաժինը՝ «Երկրագրությունը», նկարագրում է առանձին երկրամասերը՝ ըստ մայրցամաքների: Հայաստանից ու հարակից երկրներից դուրս գտնվող երկրամասերին վերաբերող բաժինները հիմնականում Պտղոմեոսի աշխատության համապատասխան գլոխների համառոտ շարադրանքն են (առանձին քարտեզներով)՝ հագեցված նոր նյութերով և համապատասխանեցված «Աշխարհացոյցի» ստեղծման ժամանակաշրջանին: Հատկապես արժեքավոր է Մեծ Հայքի, Վրաց աշխարհի, Ադվանքի, Պարսից աշխարհի, մասամբ՝ Կողքիսի, Հյուսիսային Կովկասի («Ասիական Սարմատիա») ու Փոքր Ասիայի («Միջերկրեայք»), Միջագետքի և Ասորիքի նկարագրությունը, որին նվիրված է «Աշխարհացոյցի» բնագրի մեծ մասը: «Աշխարհացոյցը», ընդունելով հելենիստական ժամանակաշրջանի տիեզերական պատկերացումները և հետևելով Պտղոմեոսի հայացքներին, Երկիրը համարում է գնդաձև, իսկ տիեզերքը՝ երկրակենտրոն:

Աշխատության հեղինակը մաթեմատիկական հաշվարկների օգնությամբ կառուցել է աստիճանացանց, որտեղ ցույց է տվել այդ ժամանակվա հայտնի աշխարհը: Դա Արևելյան կիսագնդի հյուսիսային մասն էր: «Աշխարհացոյցը» դարեր

շարունակ օգտագործվել է Հայաստանի դպրոցներում որպես աշխարհագրության դասագիրք<sup>[11]</sup>: Հեղինակը, Պտղոմեոսի երկերից գատ, օգտագործել է նաև մեզ չհասած այլ աղբյուրներ, ստեղծել գիտական եզակի կարևորության կոթող: «Աշխարհացույցը» վկայում է, որ վաղմիջնադարյան Հայաստանում եղել է զարգացած քարտեզագություն, որը նախորդել է արաբական քարտեզագրությանը:

#### Հայքն ըստ V դարի Աշխարհացույցի



Հայաստանն (Մեծ Հայք, Փոքր Հայք, Կիլիկիա) ու հարակից երկրներն ըստ XIII դարի Աշխարհացույցի

Աշխարհացույցը կազմվել է V դարում (Մովսես Խորենացի) և շարունակվել, թարմացվել VII դարում (Անանիա Շիրակացի): Պահպանվել է նաև XIII դարի «Աշխարհացույցը»՝ Վարդան Արևելցու անունով:

## ՓԼՈՒԽ 2

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

#### 2.1. Աշխարհագրական մտքի զարգացումը 19-րդ դարում

Ղևոնդ Ալիշան (Քերովբե Պետրոս–Մարգարի Ալիշանեան, հուլիսի 6 (18), 1820, Կոստանդնուպոլիս, Օսմանյան կայսրություն - նոյեմբերի 9, 1901, Սուրբ Ղազար կղզի, Իտալիայի թագավորություն), հայ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1838):

**ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ.  
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գրող, պատմաբան, բանաստեղծ, աշխարհագետ, բանահավաք, թարգմանիչ Ղևոնդ Ալիշանը (Քերովբե Պետրոս–Մարգարի Ալիշանեան), ծնվել է 1820թ.՝ Կ.Պոլսում: Սովորել է ծննդավայրի Վ. Չալըխյանի վարժարանում, 1832–41 թթ-ին՝ Վենետիկի Մխիթարյանների դպրոցում, 1838 թ-ից՝ դարձել է միաբանության անդամ: Տասնվեց տարեկանում, եկեղեցական կանոնակարգի համաձայն, անվանափոխվել է՝ Ղևոնդ Ալիշան: 1872 թվականից ամբողջովին նվիրվել է գիտական գործունեության: Եղել է Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր (1886), Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և ղոկտոր, անդամակցել է իտալական և ռուսական գիտական ընկերությունների: Մահացել է 1901 թվականի նոյեմբերի 9-ին և թաղվել Վենետիկի Ս. Ղազար կղզում:

Գեղարվեստական բացիկ Հայրուհի դեմքեր նկ. Սիմոն Նահապետ, Վենետիկ, 1900-ական թթ.

Ծնվել է հուլիսի 6-ին, Կ.Պոլսում, դրամագետ–հնագետի ընտանիքում: Սկզբնական կրթությունը տեղի Չալըխյան վարժարանում ստանալուց (1830-1832) հետո ուսումը շարունակել է Վենետիկի Մխիթարյանների դպրոցում (1832-1841): Հետագայում աշխատել է Ռափայելյան վարժարանում որպես ուսուցիչ (1841-1850, ապա՝ 1866-1872), տեսուչ (1848-ից), «Բազմավեպ»ի խմբագիր (1849-1851), ուսուցիչ Փարիզի Մուրատյան վարժարանում (1859-1861): 1872 թվականից

ամբողջովին նվիրվել է գիտական գործունեության: Եղել է Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր (1886), Ենայի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ և դոկտոր, անդամակցել է իտալական և ռուսական գիտական ընկերությունների: Մահացել է 1901 թվականի նոյեմբերի 9-ին և թաղվել Վենետիկի Ս. Ղազար կղզում:

Գիտական հոդվածներով Ալիշանը հանդես է եկել 1843 թվականից՝ «Բազմավեպի»-ի էջերում: «Տեղագիր Հայոց Մեծաց» (1855) աշխատության մեջ տեղագրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտա-աշխարհագրական բնութագրությունը: Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմա-աշխարհագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է գետեղվեին 20-22 մեծադիր հատորներում:

Շարքի առաջին գործն է «Շիրակ»-ը (1881), որտեղ Ալիշանը, բնավ Հայաստանում եղած չլինելով, հանգամանալից քննության է ենթարկել այդ գավառի պատմությունն ու աշխարհագրությունը:

Այնուհետև իրար են հաջորդել «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890) և «Սիսական» (1893) աշխատությունները, որոնք չհնացող կոթողներ են հայագիտության գանձարանում: Այդ գործերում Ալիշանը մասնագիտական մանրակրկիտությամբ տեղագրել է Հայաստանի պատմական նահանգներ լեռները, գետերը, լճերը, ձորերը, արժեքավոր տեղեկություններ հաղորդել քաղաքներում, շենքերում ու գյուղերում եղած մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին: Նրա տեղագրական երկերում հավաքված են բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, զանազան հուշարձանների վրա եղած արձանագրություններից, ամփոփված են իր նկարագրված բոլոր արձանագրությունները: Ալիշանը հետևել է ժամանակին լայն տարածում ստացած «աշխարհագրական ուղղությանը», ըստ որի մարդկային հասարակության զարգացման հիմնական ազդակը աշխարհագրական միջավայրն է: Նրանով են պայմանավորվում երկրների ու ժողովուրդների միջև եղած տարբերությունները:

1881 թվականին Վենետիկում կայացած աշխարհագրագետների համաշխարհային երրորդ կոնգրեսում Ալիշանը կարդացել է «Հայկական աշխարհագրություն» թեմայով զեկուցում, որտեղ, ի թիվս Հայաստանի

աշխարհագրության հետ առնչվող բազում հարցերի, պաշտպանել է այդ տեսությունը: Ալիշանը կարևոր ներդրում ունի մի շարք հայ պատմիչների գործերի գիտական հրատարակման բնագավառում: Դրանցից են՝ Կիրակոս Գանձակեցու «Համառոտ պատմութիւն» (1865), Լաբուրնա ասորի մատենագրի «Թուղթ Արգարու...», Խոսրով Անձևացու «Մեկնութիւն աղօթից պատարագին»(1869), «Կամենից, Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռուսենիոյ»(1896) երկերը, «Սովերք հայկականք» մատենաշարի 22 հատորիկները (1853-1861):

Ուշագրավ է Ալիշանի «Հայրուսակ կամ հայկական բուսաբառություն» (1895) աշխատությունը, ուր հավաքել, դաս-դասել և գիտականորեն բնութագրել է հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսեր ու ծաղկատեսակներ: Իր գիտական հսկայական ժառանգությամբ (ավելի քան 45 հատոր), Ալիշանը մեծապես նպաստել է հայրենական գիտության զարգացմանը: Նրա գործերից շատերն այսօր էլ ունեն ճանաչողական արժեք և սկզբնաղբյուրի նշանակություն:

## 2.2. Աշխարհագրական մտքի զարգացումը 20-րդ դարում

**Կամսար Մելքոնի Ավետիսյան** (մայիսի 2, 1905, Հին Բայազետ, Մարզվան, Սեբաստիայի վիլայեթ, Օսմանյան կայսրություն - հոկտեմբերի 24, 1976, Երևան, Հայկական ԽՍՀ, ԽՍՀՄ), հայ աշխարհագրագետ, մանկավարժ, գրող: Կամսար Ավետիսյանը ծնվել է 1905 թվականի մայիսի 2-ին, Բագրևանդի գավառի Հին Բայազետ քաղաքում: Նրա հայրը համեստ արհեստավոր էր՝ գլխովին թաղված ընտանեկան հոգսերի մեջ: Կովկասահայ մի ուսուցչուհի բախտորոշ դեր է խաղում ապագա գիտնականի կյանքում՝ ուսումնաստենչ պատանուն բերում է Թիֆլիս ու տեղավորում Ներսիսյան դպրոցում: Դա 1915 թվականի աշնանն էր: Ներսիսյան դպրոցում շուտով երևան են գալիս Ավետիսյանի աշխարհագրական նախասիրությունները: Աշխարհագրության ուսուցիչներ Արտաշես Աբեղյանը և Հակոբ Էլիբեկյանը խրախուսում են նրան: Ավետիսյանը վերհիշում է. «Մի անգամ, երբ դասը պատմեցի-վերջացրի, Էլիբեկյանը դասարանի առաջ գրկեց ինձ ու բացականչեց. «Շատ ապրես, Կամսար, դու լավ աշխարհագրագետ կդառնաս»: Պատանու մեջ գնալով ամրապնդվում է գիտությանը նվիրվելու ձգտումը: 1932 թվականին նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի նորաբաց



աշխարհագրության ֆակուլտետը և 1937-ին հաջողությամբ ավարտում: Նույն թվականից նա արդեն աշխարհագրություն է ավանդում Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Սկսվում է Ավետիսյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը, որը տեում է ավելի քան երեք տասնամյակ: 1947 թվականին նա պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Արևմտյան Հայաստանի բնաշխարհը» թեմայով:

Պատանիների համար գրելու միտքն ինչպե՞ս է ծագում գիտնականի մոտ: Մի տեղ նա բացատրում է. «Իմ աշխատանքը այնպես դասավորվեց, որ ես շատ մոտ կանգնեցի դպրոցին: Տարվա համարյա կեսը անց էի կացնում դպրոցում, ղեկավարելով ուսանողների պրակտիկան՝ աշխարհագրության գծով: Այստեղից էլ իմ մեջ միտք ծագեց օգնել դպրոցին նաև գրելով»: Ահա այսպես ծնվեցին այն գրքերը, որ քիչ առաջ թվարկեցինք:

Ո՞րն է այդ գրքի հիմնական արժանիքը, ինչի՞ շնորհիվ են դրանք դարձել պատանի ընթերցողի անբաժան ուղեկիցները: Գիտելիքների այն հարուստ, անսպառ պաշարի շնորհիվ, որ հեղինակը շոայլորեն փռում է նրա առաջ: Գիտնականի հետ մենք անցնում ենք երկրե-երկիր, լողում ծովերով, օվկիանոսներով, գետերով ու լճերով, տեսնում երկրագնդի բուսական ու կենդանական աշխարհը, ծանոթանում ազգերին, ցեղերին ու ցեղախմբերին, նրանց ստեղծած նյութական արժեքներին, հիանում մարդկային հանճարի անմեռ կոթողներով, նկարչության, քանդակագործության, ճարտարապետության անանց արժեքներով:

Սակայն, ինչպես ամեն կարգի գիտելիքներ, այնպես էլ աշխարհագրական գիտելիքներ հաղորդելիս կարևոր նշանակություն ունի մատուցման եղանակը: Այստեղ էլ Կամսար Ավետիսյանը աչքի է ընկնում շահեկան մի հատկությամբ. նա պատմում է հասարակ, անպաճույճ լեզվով, ասես մտերմիկ զրույց է վարում ընթերցողի հետ: Ասելիքը մշտապես համեմում է ժողովրդական բառ ու բանի կենդանի դարձվածքներով, հարմար պահին դիմում թևավոր խոսքերի, առածների, երբեմն էլ նովելատիպ պատմությունների օգնության: Տարիների ընթացքում նա իր մեջ ամբարել է ժողովրդական զրույցների, անեկդոտների, աֆորիզմների մի ամբողջ շտեմարան և գիտե դրանք տեղին ու ժամանակին օգտագործել:

Գիտնականը առանձին «թուլություն» ունի արվեստի գործերի հանդեպ: Նրա բնակարանի պատերը ծածկված են մեծ նկարիչների կտավների ընտիր

վերատպություններով: Նրա անձնական գրադարանը հարուստ է նշանավոր արվեստագետներին նվիրված մենագրություններով: Հնդկաստան կատարած ուղևորությունից նա իր հետ բերեց հռչակավոր Թաջ-Մահալի մարմարե մակետը միայն: «Հրաշալիքների աշխարհում» գիրքը ամբողջովին նվիրված է արվեստի ստեղծագործություններին: Այստեղ մեծ սիրով ու իմացությամբ նկարագրված են աշխարհի «յոթ հրաշալիքները»՝ Քեոփսի բուրգը, Ալեքսանդրիայի փարոսը, Շամիրամի կախյալ պարտեզները, Հռոդոսի արձանը, Մավզոլ թագավորը Դամբարանը, Ջուսի արձանը և Արտեմիդայի տաճարը, ինչպես և «ութերորդ հրաշալիքները» — եգիպտական Սֆինքսը, Նեֆերտիտին, Աջանտայի ու Էլլորայի ժայռակերտ կոթողները, Չինական մեծ պարիսպը, Լաոկոոնի արձանախումբը, Պիզայի թեք աշտարակը և այլն, և այլն: Այսպիսով, Ավետիսյանի աշխատությունները գիտելիքներից բացի, ընթերցողի մեջ գեղեցկի ճաշակ են սերմանում, օգնում ավելի խորը ըմբռնելու արվեստի նշանավոր ստեղծագործությունները:

Վերին աստիճանի ուսանելի է այն անմնացորդ նվիրումը, որով Կամսար Ավետիսյանը, սկսած աշակերտական նստարանից, ծառայեց ընտրած գիտությանը: «Զարմանալիորեն շատ եմ սիրել ու սիրում եմ այդ հրաշք-գիտությունը,— գրում է գիտնականը:— Եվ եթե ինձ բախտ վիճակվեր նորից սկսել ուսումս, ապա կսկսեի աշխարհագրությունից»:

Այս գիրքը տաղանդավոր գիտնականի ու գրողի կարապի երգն է, որի վրա նա աշխատեց մինչև իր կյանքի վերջին օրերը՝ մինչև 1976 թվականի հոկտեմբերի 24-ը: Գիտնականի մահից հետո գիրքն իր ավարտին հասցրեց նրա կյանքի ընկերը, մշտական օգնականն ու քարտուղարուհին՝ Ասպրամը, որի անունը, Կամսար Ավետիսյանի անվան հետ կողք-կողքի, պսակում է «Հայրենագիտական էտյուդների» ճակատը:

**Լեմվել Հակոբի Վալեսյան** -Լեմվել Վալեսյանը ծնվել է 1929 թվականին Շիրակի մարզի Ագատան գյուղում: 1952 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը, սովորել է ԽՍՀՄ ԳԱ աշխարհագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: Աշխատել է ՀՀ ԳԱ երկրաբանության և տնտեսագիտության ինստիտուտներում, 1979-1987 թվականներին եղել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր: 1975 թվականից եղել է Հայկական աշխարհագրական

ընկերության, 1996 թվականից՝ Միջազգային աշխարհագրական միության հայկական կոմիտեի նախագահ:

Հեղինակ է 330 գիտական աշխատությունների, այդ թվում 32 մենագրությունների, աշխարհագրական ատլասների, դպրոցական և բուհական դասագրքերի: Վալեսյանի աշխատությունները վերաբերում են աշխարհագրության տեսության ու մեթոդաբանության, հասարակության տարածքային կազմակերպման, համալիր երկրագրության, երկրաբնապահպանության, քաղաքական աշխարհագրության, ատլասային և թեմատիկ քարտեզագրության խնդիրներին:

**Խաչիկ Ենոքի Նազարյան** -հայ աշխարհագետ-երկրաձևաբան: Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Խաչիկ Նազարյանը ծնվել է 1926 թվականին Արարատի շրջանի Չանախչի (այժմ՝ Զանգակատուն) գյուղում: 1950 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1953 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում, 1976-1996 թվականներին եղել է աշխարհագրության ֆակուլտետի դեկան, 1989-1997 թվականներին<sup>[2]</sup>, միաժամանակ՝ ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիչ, 1979-1992 թվականներին՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության աշխարհագրության ուսումնամեթոդական խորհրդի նախագահ, 1980-2001 թվականներին՝ Հայկական աշխարհագրական ընկերության փոխնախագահ, 2006 թվականին՝ «Հայաստանի բնաշխարհ» հանրագիտարանի գիտախմբագրական խորհրդի անդամ:

Աշխատանքները վերաբերում են Հայկական լեռնաշխարհի ռելիեֆի ձևաձագումնաբանական տիպերի վերլուծությանը, ֆիզիկական աշխարհագրության շրջանցման, սելավաբեր երևույթների, հնէաշխարհագրության, բնօգտագործման և բնապահպանության, ֆիզիկական աշխարհագրության կիրառական խնդիրներին<sup>[4]</sup>: Հետազոտել է ՀՀ մակերևույթը, սելավային հոսքերը, կազմել ռելիեֆի ձևաձագումնաբանական, սելավների ձևավորման համալիր խոշորամասշտաբ քարտեզներ:

**Հրաչյա Կարապետի Գաբրելյան** -հայ աշխարհագրագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր:

Հրաչյա Գաբրիելյանը ծնվել է 1919 թվականի հունիսի 14-ին Ալեքսանդրապոլ քաղաքում (այժմ՝ Գյումրի): Միջնակարգ կրթությունը

ստանալուց հետո 17 տարեկանում ուսումը շարունակելու համար մեկնում է Մոսկվա: Այնտեղ նա ենթարկվում է ավտովթարի, ինչի հետևանքով անդամահատում են ծնկներից ներքևի հատվածները:

Հրաչյա Գաբրիելյանն ավելի քան 140 գիտական աշխատանքի՝ մենագրությունների, բուհական ուսումնական ձեռնարկների, գրքերի, գիտական հոդվածների, քարտեզների հեղինակ է: Առավել հայտնի են «Հայկական ՍՍՀ հրաբխային բարձրավանդակի հողմահարման պրոցեսները» (1962 թ.), «Գետային էրոզիան Հայկական ՍՍՀ-ում (1973 թ.), «Հողի էրոզիան և պայքարը նրա դեմ» (1974 թ.), «Անդրկովկասի բնությունը և ջրային էրոզիան» (1978 թ.) մենագրությունները, «Հիդրոլոգիա» (1963 թ., 1967 թ.), «Լանդշաֆտների գեոքիմիա» (1968 թ.), «Կովկասի ֆիզիկական աշխարհագրություն» (1979 թ.), «Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը» (1983 թ.), «Երկրագնդի ջրային ոլորտը» (1987 թ.) ձեռնարկները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, աշխարհագրությունն ամենահին ու ամենահետաքրքիր գիտություններից է: Աշխարհագրական գիտելիքների տարրերը հանդես են եկել տակավին հեռավոր անցյալում, երբ կենսական անհրաժեշտությունից դրդված մարդիկ հետաքրքրվել են իրենց շրջապատով: Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել է աշխարհագրական հարուստ ժառանգություն: Աշխարհագրական տեղեկություններ են պարունակում հայ պատմիչների գործերը և ձեռագիր այլ աղբյուրները:

Աշխարհագրության ժամանակակից ընկալումը և նպատակը տարբերվում է նախկին աշխարհագրական ընկալումից նրանով, քանի որ նախկինում շեշտը դրվում էր նկարագրական բաղադրիչի վրա: Հայտնի էր, որ նախկինում աշխարհագետները հիմնականում զբաղվում էին տարածքներ հայտնաբերելով, դրանց բնությունը, բնակչությունը և տնտեսությունը նկարագրելով: Այլ կերպ ասած, աշխարհագրական գիտության ուսումնասիրության առարկան ընդարձակվում էր տարածական ընդարձակման շնորհիվ: Այսինքն՝ գիտությունը զարգանում էր էքստենսիվ ուղիով:

Ներկայում էլ աշխարհագետները հայտնաբերում են նոր տարածքներ Անտարկտիդայում, Օվկիանիայում և քիչ հետազոտված վայրերում: Սակայն նոր տարածք հայտնաբերելը այլևս աշխարհագրության հիմնական նպատակն ու խնդիրը չէ: Այժմ առանջնությունը տրվում է խորքային ուսումնասիրություններին. վերլուծություն, բացահայտում, կանխատեսում և այլն: Դրա շնորհիվ նկարագրական գիտությունից աշխարհագրությունը վերածվեց վերափոխիչ-կառուցողական գիտության և սկսեց զարգանալ ինտենսիվ ուղիով: Այդ առումով մեծ դեր ու նշանակություն են ունեցել հայ աշխարհագետները և նրանց կատարած ուսումնասիրությունները Հայաստանի համար՝ թե՛ բնական, թե՛ հասարակական ու տնտեսական ասպեկտներով:

Մեծ է հայ աշխարհագետների դերը դպրոցական և բուհական դասագրքերի ստեղծման գործում, հատկապես կարելի է առանձնացնել Լ. Վալեսյանին, Հ. Գաբրիելյանին, Խ. Նազարյանին, Ա. Գրիգորյանին, Գ. Հովհաննիսյանին, Ա. Խոյեցյանին, Մ. Մանասյանին և այլոց:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D5%BF%D5%A5%D5%A3%D5%B8%D6%80%D5%AB%D5%A1:%D5%80%D5%A1%D5%B5\\_%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D5%BF%D5%A5%D5%A3%D5%B8%D6%80%D5%AB%D5%A1:%D5%80%D5%A1%D5%B5_%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%A3%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80)
2. [https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5\\_%D5%A1%D5%BF%D5%AC%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6\\_%D6%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D5%A6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6](https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5_%D5%A1%D5%BF%D5%AC%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D6%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D5%A6%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6)
3. [https://otherreferats.allbest.ru/pedagogics/00054122\\_0.html](https://otherreferats.allbest.ru/pedagogics/00054122_0.html) (հասանելի է առ. 05.08.2023 16:29)
4. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BC%D5%A5%D5%B4%D5%BE%D5%A5%D5%AC%D5%8E%D5%A1%D5%AC%D5%A5%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6>
5. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D6%80%D5%A1%D5%B9%D5%B5%D5%A1%D4%B3%D5%A1%D5%A2%D6%80%D5%AB%D5%A5%D5%AC%D5%B5%D5%A1%D5%B6>
6. [https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B9%D5%AB%D5%AF\\_%D5%86%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6](https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B9%D5%AB%D5%AF_%D5%86%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6)